

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

..... 2023 թվականի N.....-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՀՈՂԱՅԻՆ
ՀԱՇՎԵԿՇԻՌԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահին՝ իրենց կողմից կատարվող աշխատանքների արդյունքում հողային ֆոնդի կազմում կատարվող փոփոխությունները (բազմամյա տնկարկների հիմնում, նոր հողերի իրացում, ոռոգվող հողերի նոր ելքեր, անտառների հիմնում և այլ փոփոխություններ), դրանց ի հայտ գալու դեպքում, մեկամյա ժամկետում, ներկայացնել Հայաստանի Հանրապետության մարզպետներին, համապատասխան համայնքների ղեկավարներին և սահմանված

կարգով ներկայացնել Կադաստրի կոմիտե՝ հողերի ընթացիկ հաշվառումն իրականացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ անտառշինական ծրագրերի իրականացման ժամանակ հայտնաբերված հողային ֆոնդի բաշխման անճշտությունները, անտառային հողերի, ինչպես նաև ազգային պարկերի, արգելոցների, արգելավայրերի սահմաններն ու տարածքները կառավարման պլաններին համապատասխան ճշգրտելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության մարզպետների, համայնքների ղեկավարների հետ և սահմանված կարգով ներկայացնել Կադաստրի կոմիտե՝ ընթացիկ հողային հաշվեկշռում ընդգրկելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՀՈՂԱՅԻՆ
ՀԱՇՎԵԿՇԻՌԸ)

		Տարածքը (հազար հեկտար)	որից նոռզվող
	Հայաստանի Հանրապետության տարածքը	2,974.3	209.5
	այդ թվում՝		
1	Հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության		
1)	գյուղատնտեսական նշանակության հողեր	2,041.4	156.0
	որից՝		
ա.	վարելահողեր	441.6	115.2
բ.	բազմամյա տնկարկներ	40.2	39.3
գ.	խոտհարքներ	121.3	1.5
դ.	արոտավայրեր	1,049.2	
ե.	այլ հողատեսքեր	389.1	
2)	բնակավայրերի հողեր	152.5	53.1
	որից՝		
ա.	տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր	94.7	53.0
3)	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	39.9	
4)	էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	14.3	
5)	հատուկ պահպանվող տարածքների հողեր	335.5	
6)	հատուկ նշանակության հողեր	30.4	
7)	անտառային հողեր	333.8	0.40
8)	ջրային հողեր	25.9	
9)	պահուստային հողեր	0.6	
2.	Հողային ֆոնդն ըստ սեփականության սուբյեկտների		
1)	քաղաքացիների	541.5	180.8
2)	իրավաբանական անձանց	41.4	6.8

3)	համայնքային	1,017.6	20.1
4)	պետական	1,373.0	1.6
5)	օտարերկրյա պետությունների, կազմակերպությունների	0.8	0.2

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2023 թ. հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը) հաստատելու մասին»

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Որոշման նախագծի մշակումը բխում է ՀՀ հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի՝ հողամասերն, անկախ սեփականության ձևից, ենթակա են պետական հաշվառման: Պետական հաշվառումն իրականացվում է անընդհատ՝ սկզբնական հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխություններն արտացոլելով հաշվառման տեքստային ու գրաֆիկական փաստաթղթերում: Հողամասերի պետական հաշվառման արդյունքում կազմվում է ՀՀ հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ, որը հաստատում և հրապարակում է ՀՀ կառավարությունը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N656 որոշման պահանջի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1553-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ 2022 թվականի հողային հաշվեկշիռը: 2022 թվականի հուլիսի 1-ից մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը ընկած հաշվետու ժամանակահատվածում ՀՀ հողային ֆոնդում կատարվել են նպատակային և գործառնական նշանակությունների, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների, ինչպես նաև ոռոգվող հողերի մակերեսների փոփոխություններ: Անհրաժեշտ է վերոհիշյալ փոփոխություններն արտացոլել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի հողային հաշվեկշիռում:

Որոշման ընդունմամբ կկատարվի ՀՀ հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջը՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական

փոփոխություններն կարտացոլվեն 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված ՀՀ հողային հաշվեկշռում: «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2023 թ. հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը) հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը հաստատվելուց հետո կիրառարակվի, ինչպես նաև կտեղադրվի Կադաստրի կոմիտեի պաշտոնական կայքում, որի տվյալներից կկարողանան օգտվել շահագրգիռ բոլոր պետական մարմինները, կազմակերպություններն ու անձինք:

3. Ակնկալվող արդյունքը

«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2023 թ. հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը) հաստատելու մասին» նախագիծը ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո կիրառարակվի, որի նորացված և ճշտված տվյալներից կկարողանան օգտվել շահագրգիռ բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպություններն ու անձինք:

Որոշման նախագիծը տեղադրվել է ՀՀ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am և Կադաստրի կոմիտեի cadastre.am կայքերում:

«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման 2023 թվականի հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը) հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում ավելացում կամ նվազում չի առաջացնում:

Նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 16-րդ կետի 16.1-ին ենթակետի «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունում» միջոցառման պահանջներից: